

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

Վ. Հ. ՇԱՌՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի
օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան

Ներածություն

Պատմական աղբյուրները մեզ հասցրել են բազմաթիվ վկայություններ լեռնային վայրերում մղված պատերազմների մասին, որոնց բնակլիմայական առանձնահատկություններով պայմանավորված՝ հրամանատարներին ու մարտիկներին պետք է եղել դրսևորել մեծ մասնագիտական ու ֆիզիկական ունակություններ, բարձր կամային ու հոգեբանական հատկանիշներ, տոկունություն, կռվելու, պայքարելու ու գոյատևելու զգալի ներուժ: Օրինակ՝ 1979–1989 թթ. Աֆղանստանում մղվող պատերազմի արդեն սկզբնական փուլում պարզ դարձավ, որ ԽՍՀՄ բանակային խմբավորման պատրաստակաևությունը չէր համապատասխանում հատուկ պայմաններում մարտական գործողությունների վարման պահանջներին, ուստի հարկ եղավ այդ բացը լրացնել առաքելության ընթացքում:

Հաճախ հրամանատարները պնդում են, թե լեռներում կռվում են ոչ միայն հակառակորդի, այլև շրջապատող միջավայրի դեմ, և եթե զորքը կարող է կռվել լեռներում, ապա կարող է մարտնչել ցանկացած պայմաններում: Այսպես. լեռնային պայմաններում գործողությունների վարման եղանակների իմացությամբ և հմուտ կիրառմամբ հնարավոր է անակնկալի բերել հակառակորդին: Դրա համար կարևոր է ամրապնդել ունեցած գիտելիքները, հասկանալ լեռները և զարգացնել լեռներում արդյունավետ պայքարելու կարողությունները¹: Այդ է պատճառը, որ ծովի մակերևույթից 2-3 կմ-ից բարձր վայրերում հաջողությամբ խնդիրներ կատարող ստորաբաժանումներն ունեն «ընտրյալի» կարգավիճակ²:

Մեր տարածաշրջանին հատուկ լեռնային պայմանները կարելի է նպա-



* Հոդվածն ստացվել է 02.04.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 15.07.2025:

¹ Տես «Специалисты НАТО по ведению боевых действий в горах», 06.09.2023 (<https://www.natomultimedia.tv/app/asset/695313>):

² Տես «What differentiates Mountain warfare from other forms of warfare?» (https://www.reddit.com/r/WarCollege/comments/lf8oi8/what_differentiates_mountain_warfare_from_other/?rdt=49455):

տակային կերպով օգտագործել, ինչպես նախկինում արել են մեր զորավարները, քանակապես գերակշռող հակառակորդի նկատմամբ գերազանցության հասնելու համար: Այստեղ ևս նշանակալի դեր ունի տեխնոլոգիական առաջընթացը. փոխվել է լեռնային պատերազմի վարման բնույթը, մշակվել են լեռնային պատերազմի հատուկ պահանջներին համապատասխանող մարտավարություն, սպառազինություն, ռազմական տեխնիկա և հանդերձանք:

Սույն հետազոտությամբ փորձել ենք արտասահմանյան մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ներկայացնել այն գործոնները, որոնք կարևոր ազդեցություն են թողնում լեռնային պայմաններում օպերացիայի կազմակերպման վրա՝ ինչպես որոշման ընդունման, այնպես էլ այդ որոշման արդյունավետ իրագործման փուլերում:

Օպերացիայի կազմակերպումը (որոշման ընդունումը) լեռնային պայմաններում

Լեռնային պայմանները օպերացիաների վրա կարող են ազդել ինչպես դրականորեն, այնպես էլ բացասաբար: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ բոլոր մակարդակների հրամանատարները և շտաբները *կարողանան տեղանքում արագ և ազատ կերպով կողմնորոշվել, ըստ ստեղծված իրադրության, բայց ավագ պետի մտահոլացման սահմաններում արագ որոշումներ կայացնելիս դրսևորել հնարամտություն և նախաձեռնողականություն՝ ռիսկերի ճշգրիտ հաշվարկման պայմանով*³: Ուստի օպերացիայի նախապատրաստման ու վարման շատ ծավալուն և աշխատատար գործընթացից կդիտարկենք միայն որոշման ընդունման փուլը:

Ընդհանուր առմամբ օպերացիային նախապատրաստվելու՝ հրամանատարի ու շտաբի աշխատանքն սկսվում է վերադաս շտաբից մարտական խնդրի ստացմամբ: Այնուհետև ստացված խնդիրը պարզորոշվում է, գնահատվում է իրադրությունը և ըստ դրա էլ ընդունվում է օպերացիայի որոշումը⁴:

Դիտարկենք լեռներում ռազմական գործողությունների այն առանձնահատկությունները, որոնք ճիշտ կազմակերպելու և կիրառելու համար անհրաժեշտ է համարվում.

- 1) ուսումնասիրել լեռնային ռելիեֆի հատկությունները և վիճակը,
- 2) նախանշել գործողությունների նպատակին հասնելու արդյունավետ եղանակները,
- 3) խնդիրները բաշխել ենթակա հրամանատարների միջև, հաշվարկել

³ Stu “ATP-3.2.1.3. Conduct of Land Tactical Operations in Mountainous Environment”. Edition A, Version 1, April 2024, 2.2.2 “Risk management” (<https://iamms.org/wp-content/uploads/2024/07/ATP-3.2.1.3-EDA-V1-E.pdf>):

⁴ Stu «Военный энциклопедический словарь». «Решение на операцию (бой)». М., 2002, с. 1134; նաև՝ Է. Կ. Սարկիսյան, Հրամանատարի և շտաբների աշխատանքների արդյունավետության վրա ազդող պայմաններն ու մոտեցումները ժամանակակից պատերազմների (օպերացիաների) բնույթի հաշվառմամբ: «ՀԲ», 2023, հմ. 2:

ուժերն ու միջոցները մի շարք մասնակի խնդիրների կատարման համար՝ բնական խոչընդոտների և հակառակորդի հնարավոր ազդեցության հաշվառմամբ,

- 4) որոշել նպատակին հասնելու համար պահանջվող ջանքերի (ֆիզիկական ու կրակային) աստիճանը,
- 5) նախանշել հակառակորդի տարբեր տեսակի ներգործություններից և բնական պատահարներից շարակարգի տարրերի ապահովման միջոցառումները, այդ թվում՝ նախորոշել զորքերի պաշտպանությունը հակառակորդի խոցումից, հատկապես՝ գերձշգրիտ զենքով,
- 6) նախանշել միջոցառումներ զորամիավորումների (զորամասերի) կառավարման ապակենտրոնացման դեպքում⁵:

Հայտնի է, որ լեռներում զորքերի գործողությունների բնույթը մեծապես պայմանավորված է լեռնային տեղանքի և կլիմայի առանձնահատկություններով, որոնք դառնում են օպերացիաների նախապատրաստման և վարման վրա տարբեր ձևերով ու տարբեր աստիճանով ազդող գործոններ: Նշենք դրանցից մի քանիսը, որոնք, մեր կարծիքով, առավել կարևոր են.

1. տեղանքի խիստ կտրտվածությունը, սահմանափակ տարողունակությունը և առանձնացվածությունը (մեկուսացվածությունը), ճանապարհների սակավությունը, խոչընդոտների անհաղթահարելիությունը կամ դժվարհաղթահարելիությունը, «մեռյալ» տարածությունների և ծածուկ մատույցների առկայությունը, ինչի պատճառով՝

- դժվարանում են ավիացիայի բազավորումը և օդադեսանտային զորքերի կիրառումը (հատկապես՝ վայրէջքով իջեցման դեպքում), կողմնորոշումը, կառավարման, համակողմանի ապահովման և փոխգործության կազմակերպումն ու իրագործումը,
- խոչընդոտվում է զորքերի տարաշարժը (հատկապես՝ ձմռանը), առաջանում են զորքերի ու տեխնիկայի կուտակումներ,
- հակառակորդը հնարավորություն է ստանում ծածուկ և աննկատ կերպով, փոքր խմբերով ներթափանցելու շարակարգների խորքը, կիրառելու դեսանտադիվերսիոն ուժեր, ինչպես նաև հարվածներ հասցնելու զորաթևերից ու թիկունքից,
- զգալիորեն նվազում են խոցման միջոցների մարտական հնարավորությունները,

2. քամիների արագության և ուղղության կտրուկ փոփոխությունները, օդի ուժեղ ուղղաձիգ հոսանքները, ամպրոպները և անձրևային եղանակը, կարկուտը, հեղեղները, սահմանափակ տեսանելիությունը, գետերի ջրային ռեժիմի կտրուկ փոփոխությունները, սողանքների, քարավեժների, ձյունահյուսների մեծ վտանգը, ճանապարհների և արահետների սառցակալումները, որոնք՝

⁵ Տես *В. Г. Клементьев. Боевые действия горных войск, г. 2. «Особенности боевой деятельности войск в горах». М., 1940, сс. 39–50 (http://militera.lib.ru/science/10/pdf/klementyev_vg01.pdf); նաև՝ *Ս. Ա. Սուջյան, Ռազմական աշխարհագրություն: ՈՒՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԾԵՌՆԱՐԿ: Ե., 2023, էջ 104–110:**

- ազդում են խոցման միջոցների կրակի (հարվածների) ճշգրտության և արդյունավետության վրա,
- սահմանափակում են ավիացիայի, այդ թվում՝ ԱԹԱ-ների, կիրառումը, նվազեցնում տեխնիկական հետախուզության և կրակային խոցման միջոցների կիրառման արդյունավետությունը,
- խոչընդոտում են զորքերի տարաշարժերին,
- դժվարացնում են համակողմանի ապահովումների կազմակերպումը և այլն,

3. անտառածածկույթի սակավությունը կամ բացակայությունը, ժայռաքարային հողածածկույթի գերակշռությունը, ինչը՝

- դժվարացնում է զորքերի քողարկումը և նրանց ծածուկ տարաշարժը, ինչպես նաև պաշտպանական բնագծերի, դիրքերի, շրջանների և ինժեներական արգելափակոցային համակարգերի սարքավորման աշխատանքները,
- մեծացնում է ինժեներական սարքավորման և կահավորման աշխատանքների սահմանված ժամկետները,

4. բարձրության աճմանը զուգահեռաբար մթնոլորտային ճնշման (օդի խտության) և ջերմաստիճանի նվազումը⁶, ինչը՝

- ազդում է անձնակազմի աշխատունակության և հարմարվողականության վրա, առաջացնում է բեռնվածություն և հոգեբանական խնդիրներ՝ քրոնիկական հոգնածություն, կենտրոնանալու ունակության կորուստ, տրամադրության և հիշողության հետ կապված կտրուկ փոփոխություններ, ինչպես նաև անհարմարավետության զգացողություն, համի զգացողության փոփոխություն և այլն,
- մեծացնում է ՍՈՏ ՎԲՆ ծախսը, նվազեցնում է շարժիչների հզորությունը և հրետանու հրաձգության ճշգրտությունը,

5. բացասական (էկրանավորող) ազդեցությունը ՌՏԿ, ծայնային հետախուզության, ՌՏ և կապի միջոցների աշխատանքի վրա, որը՝

- նվազեցնում է կառավարման համակարգի տարրերի, ՌՏԿ-ների և ծայնային հետախուզության միջոցների աշխատանքի արդյունավետությունը,

6. ծորերում և գետահովիտներում մարտական թունավոր նյութերի երկարատև պահպանումը, ինչի հետևանքով՝

- մարտական թունավոր նյութերից պաշտպանվելու համար անձնակազմը երկար ժամանակ կիրառում է անհատական պաշտպանական միջոցներ, ինչն ազդում է անձնակազմի տարաշարժի, ժանրաբեռնվածության, բարոյահոգեբանական վիճակի և ՍՈՏ կիրառման արդյունավետության վրա,

⁶ Տես Ս. Ա. Պարզյան, Ա. Ռ. Համբարձումյան, Լ. Գ. Հովհաննիսյան, Լեռնային պայմաններում զինծառայությանը անձնակազմի պատրաստման որոշ առանձնահատկություններ: «ՀԲ», 2022, հմ. 3, 4; նաև՝ Ա. Գ. Կարայան, Ա. Փ. Կարաբաև. Психологические особенности боевых действий в горах. «Психопедагогика в правоохранительных органах», 2020, Т. 25, № 2:

- լրացուցիչ շրջանցումների պատճառով աճում է ՎՔՆ և մոտոռետուրսների ծախսը⁷:

Բացի այդ, լեռնային պայմաններն զգալի ազդեցություն են գործում նաև զինծառայողների առողջական վիճակի վրա՝ էապես նվազեցնելով նրանց մտավոր ու ֆիզիկական կարողությունները, դիմացկունությունը, աշխատունակությունը, զգոնությունը, կողմնորոշվելու ունակությունը, առաջ են բերում հոգեկան ընկճվածություն (դեպրեսիա), լեռնային հիվանդության զարգացում և այլ բացասական երևույթներ: Դրանք էապես ազդում են բոլոր օղակների հրամանատարների վրա՝ իրավիճակին համապատասխան նպատակային որոշումներ ընդունելիս, մարտական խնդիրներ առաջադրելիս և զորքերը կառավարելիս:

Սակայն նշված գործոնները կարող են ունենալ նաև դրական ազդեցություն, որը ճիշտ օգտագործելու դեպքում հրամանատարը և շտաբը կարող են հաջողությամբ կազմակերպել անհրաժեշտ միջոցառումներ, քանի որ՝

- ստեղծվում են զորքերի գործողությունների վարման ծածուկությունը, հանկարծակիությունը և պաշտպանվածությունը ապահովելու ավելի մեծ հնարավորություններ,
- հնարավոր է լինում սակավ ուժերով կազմակերպել ավելի լայն ճակատով (թեև՝ ոչ հոծ) պաշտպանություն, ինչի շնորհիվ կարելի է վերահսկել հակառակորդի գործողությունների բնույթը (գերիշխող և հրամանատարական բարձունքներ զբաղեցնելու դեպքում),
- նվազում է հակառակորդի հետախուզական տեխնիկական միջոցների աշխատանքի արդյունավետությունը,
- հնարավորություն է ընձեռնվում հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու համար ճանապարհների վրա ստեղծելու խոչընդոտներ՝ քարավեժներ, ծյունահյուսներ և այլն:

Օպերացիաների նախապատրաստման ու վարման վրա լեռնային պայմանների դրական ու բացասական ազդեցությունների վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս նաև նախանշելու որոշ չափանիշներ, որոնց պետք է համապատասխանեն հրամանատարներն ու շտաբները.

- պատրաստ լինել համակողմանիորեն գնահատելու խնդիրների կատարման վրա լեռնային գործոնների ազդեցությունը, նպատակային և արդյունավետ կերպով բաշխելու ուժերն ու միջոցները, քանի որ, ինչպես վկայում է փորձը, լեռներում ծավալվող մարտական գործողությունների զոհերի մեծ մասը ոչ թե բուն մարտական գործողությունների, այլ լեռնային միջավայրին բնորոշ մշտական վտանգները հաշվի չառնելու հետևանք է, ուստի անհրաժեշտ է, որ հրամանատարները և զորքերը նախապես ստանան լեռնային պայմաններում գործելու համար հատուկ պատրաստում,
- առանձնակի ուշադրություն դարձնել միջին օղակի հրամանատարական կազմի մասնագիտական պատրաստման որակի վրա, քանի որ լեռներ-

⁷ Տես Վ. Գ. Կլեմենտև, Նշ. աշխ., էջ 30–38:

րում մարտական գործողությունները հիմնականում վարվում են ապակետորոնացված եղանակով՝ դասակի կամ վաշտի (գումարտակի) մակարդակով,

- ենթակա բոլոր հրամանատարները ավագ պետի առաջադրած խնդիրը (մտահղացումը) պարզելուց հետո ունակ լինեն դրսևորելու նախաձեռնողականություն, կայացնելու ինքնուրույն որոշումներ՝ ստեղծված իրավիճակին համապատասխան:

Ռեսուրսները նաև ցույց է տալիս, որ նպատակահարմար է դեռ օպերացիայի նախապատրաստման փուլում նախատեսել և իրականացնել մի շարք կարևոր միջոցառումներ, որոնցից են՝

- *գործերի ուսուցումը, ուսումնավարժեցումը և հանդերձավորումը* լեռնային պայմաններում օպերացիա վարելու համար: Օրինակ՝ Պատերազմի վարման ՆԱՏՕ-ի առաջավոր փորձի կետորոնը Սլովենիայի լեռնային տեղանքում ուսումնավարժեցում իրագործելու նպատակով, նախ, հետևակայիններին պատրաստում է ըստ մասնագիտական հմտությունների, ապա կետորոնի մասնագետները նրանց հետ մեկնում են Սլովենիայի լեռներ և սովորեցնում դժվարին պայմաններում գործելու ձևերն ու մեթոդները⁸,

- *ՄՈՏ նախապատրաստումը և անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ու պաշարների ստեղծումը*՝ տեղանքի ֆիզիկաաշխարհագրական ու կլիմայական պայմանների և այլ հանգամանքների հաշվառմամբ: Պետք է նկատի ունենալ, որ տրանսպորտային միջոցները և սարքավորանքը մեծ մասամբ նախատեսված են բարեխառն կլիմայի պայմաններում կիրառելու համար, ուստի դեռ մինչև ռազմական գործողությունների թատերաբեմ տեղափոխելը դրանք պետք է արդեն պատրաստի վիճակում լինեն լեռնային պայմաններում (հատկապես՝ ձմռան ամիսներին) կիրառմանը:

Լեռնային պատերազմի մասին մակերեսային գիտելիքները և լեռնային միջավայրի ազդեցություններից անտեղյակությունը կամ դրանց թերագնահատումը կարող են հանգեցնել անհաջողության և մեծաթիվ մարդկային կորուստների: Լավ արդյունքի հասնելու համար լեռներում ուսուցումը պետք է ոչ թե ուժեղացնի կամ ամրապնդի միայն ուժեղ կողմերը, այլ ուղղված լինի նաև թույլ կողմերի վերացմանը:

Այժմ փորձենք պարզել, թե լեռնային պայմաններում պաշտպանողական օպերացիայի որոշման ընդունման փուլում հրամանատարը և շտաբը, բացի սովորական պայմաններին բնորոշ հարցերից, ուրիշ ինչ պետք է նախանշեն և ձեռնարկեն:

Լեռնային պայմաններում հրամանատարի և շտաբի աշխատանքի մեթոդաբանությունը օպերացիայի կազմակերպման (որոշման ընդունման) ժամանակ, ըստ էության, չի տարբերվում սովորական պայմաններից, սակայն այդ

⁸ Տես «Специалисты НАТО по ведению боевых действий в горах», 06.09.2023 (<https://www.natomultimedia.tv/app/asset/695313>):

փուլում, պայմանավորված լեռնային տեղանքի առանձնահատկություններով, առաջանում են որոշվող և զորքերին հանձնարարվող մի շարք լրացուցիչ խնդիրներ ու միջոցառումներ: Մասնավորապես՝ պետք է հաշվի առնել, որ թեև մարտական գործողությունները պլանավորվում են այնպես, ինչպես սովորական պայմաններում՝ կենտրոնացված եղանակով, սակայն կատարվում են ապակենտրոնացված, քանի որ զորքերի գլխավոր խմբավորումները հիմնականում գործում են ինքնուրույնաբար և միմյանցից մեկուսի ուղղություններով⁹:

Հրամանատարը, ստանալով մարտական խնդիրը, սովորականի պես պարզորոշում է այն, գնահատում իրադրությունը և ընդունում որոշում, որում ներառվում են օպերացիայի մտահղացումը, զորքերի (օպերատիվ դասավորման տարրերի) խնդիրները, փոխգործության հիմունքները, կառավարման և համակողմանի ապահովման հիմունքները և այլն:

Սակայն լեռնային պայմանների առանձնահատկություններով պայմանավորված՝ հրամանատարի և շտաբի աշխատանքում առաջանում է լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտություն: Դրանցից հիշատակենք մեր կարծիքով առավել կարևորները:

1) Օպերացիայի որոշման հիմքը կազմող *մտահղացումը* մշակելու ժամանակ հրամանատարը սահմանում է հետևյալ հատուկ կետերը՝ հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղությունները, առաջադրված խնդիրների կատարման ձևերն ու եղանակները, պաշտպանական դիրքերի, բնագծերի ու շրջանների համակարգը, զորքերի խմբավորումներն ու դրանց օպերատիվ դասավորումը և այլն:

Լեռնային պայմաններում այդ պահանջներին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

- *հիմնական ջանքերը կենտրոնացվում են* տանկավտանգ ուղղություններում, լեռնանցքների, ճանապարհային հանգույցների, իշխող բարձունքների, կարևոր օբյեկտների պաշտպանության վրա,
- *առաջադրված խնդիրների կատարման ձևերն ու եղանակները* սահմանելու ժամանակ նախատեսվում է, որ հակառակորդի առաջխաղացման կասեցումը և ջախջախումը կատարվեն՝
 - հակառակորդի կրակային խոցմամբ նրա առաջխաղացման համար մատչելի ուղղություններում,
 - իշխող բարձունքների, լեռնանցքների, լեռնային գետերի գետանցների, ճանապարհային հանգույցների հուսալի պահպանմամբ,
 - մխրձված հակառակորդին հակահարվածով (հակագրոհներով) բնական արգելքներին սեղմմամբ և ջախջախմամբ:

Թեև հակառակորդի կրակային խոցումը հիմնականում կատարվում է նույն կարգով, ինչ սովորական պայմաններում, սակայն ստեղծվում է բազմահարկ, թևային ու խաչաձև կրակի համակարգ, լայնորեն կիրառվում են

⁹ Stu “Mountain Warfare and Cold Weather Operations”. Leader’s Book, Chap. 4, P. 21 (<https://api.army.mil/e2/c/downloads/2023/01/31/557d66e2/20-14.pdf>):

ականանետները՝ հրասանդային կրակով բարձունքների հակադիր լանջերին հարվածելու համար: «Մեռյալ» տարածքների և գործերի մարտական ներգործության գոտիների (*area of influence*) չվերահսկվող տարածքների պահպանության համար հատկացվում են լրացուցիչ ուժեր և կրակային միջոցներ: Շարակարգների միջանկյալ հատվածները ծածկապաշտպանվում են ինժեներական արգելափակոցներով, հրետանու և բանակային ավիացիայի կրակով, կազմակերպվում են հետախուզություն, դիտում, պարեկություն, սարքավորվում են դարաններ: Հակառակորդի առաջխաղացումը կանխելու համար արդունավետ միջոցներ են դառնում փլուզումները, ծյունահյուսները և հեղեղումները,

- *պաշտպանական բնագծերի, դիրքերի և շրջանների համակարգի որոշումը* ներառում է՝
 - պաշտպանության կառուցում լայն ճակատով՝ ըստ առանձին ուղղությունների, առանց հոծ պաշտպանական բնագծերի ու դիրքերի համակարգի, ընդամին պաշտպանության հիմքը կազմում են պաշտպանական հանգույցներն ու հենակետերը (օջախային պաշտպանություն),
 - երկրորդ և կորպուսային պաշտպանական բնագծերի ստեղծում հակառակորդի հարձակման համար մատչելի ուղղություններում՝ շարահարկերով, սակայն սովորականից ավելի փոքր խորությամբ,
 - դիրքերի առջևի եզրի սարքավորում լեռնաշղթաների լանջերին, առավել նպաստավոր բարձունքներում,
 - անձնակազմի պաշտպանության համար նաև արդյունաբերական արտադրության կառուցատարրերի և համապիտանի պաշտպանական կառույցների օգտագործում,
 - ամրաշինական սարքավորման աշխատանքների ժամանակ ժայռագրունտի պայթեցման մեթոդի կիրառում,
- *գործերի խմբավորումների և դրանց օպերատիվ դասավորման որոշումը, որով նախատեսվում է՝*
 - հնարավորության դեպքում մատչելի ուղղություններում ինքնուրույն գործող գործերի առանձին խմբավորումների ստեղծում,
 - որպես կանոն, օպերատիվ դասավորման կառուցում մեկ շարակարգով՝ համագորային պահուց գործի առանձնացմամբ: Երկու և ավելի շարակարգները կառուցվում են լայն հովիտներում և ընդարձակ լեռնային սարահարթներում:

Օպերատիվ դասավորումը կառուցելիս կարևորություն է ստանում մարտական գործողությունների ժամանակ լեռնային տեղանքի բարդության հաշվառումը, քանի որ նման պայմաններում շատ դժվար է լինում հետագայում շարակարգը փոփոխել, որովհետև մարտական գործողությունների վարման ընթացքում վերախմբավորումը կապված է մեծ ռիսկերի, ժամանակի ու գործերի ֆիզիկական ուժի զգալի ծախսերի հետ, իսկ երբեմն կարող է հանգեցնել նաև մեծ կորուստների:

1-ին շարակարգ են կազմում մոտոհրաձգային (հրաձգային) զորամիավորումները (զորամասերը), իսկ *պահուց և 2-րդ շարակարգի գործերը* տե-

ղաբաշխվում են ապակենտրոնացված եղանակով՝ առավել կարևոր ուղղություններում, առաջին շարակարգին մոտ՝ սպառնալից ուղղություններում տարաշարժ կատարելու հնարավորությամբ:

Հրթիռային զորքերը կիրառվում են կենտրոնացված եղանակով և ծավալվում են հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղությամբ, սակայն որոշ դեպքերում կարող են կիրառվել առանձին դիվիզիոններով՝ կարևոր ուղղություններում: *Հրետանին*, որպես կանոն, բաշխվում է կարևոր ուղղություններում՝ օպերատիվ խնդիրներ կատարող խմբավորումներն ուժեղացնելու նպատակով: Կարևոր ուղղությունների պաշտպանության համար ստեղծվում է կորպուսային հրետանային խմբավորում: *Հակատանկային պահուց զորքը և արգելափակման շարժական ջոկատները (ԱՇՋ)* հիմնականում կիրառվում են տանկավտանգ ուղղություններում (հակառակորդի զլխավոր հարվածի ուղղությամբ), իսկ անհրաժեշտ ուժերի և միջոցների առկայության դեպքում կիրառվում են մի քանի ուղղություններում: *ՀՕՊ-ի ուժերն ու միջոցները* տեղաբաշխվում են հակառակորդի զլխավոր հարվածի հավանական ուղղությունում: Միևնույն ժամանակ, կազմակերպվում է գետահովիտների, ձորերի երկայնքով թռչող ցածրաթռիչ նշանակետերի դեմ պայքար:

Բանակային ավիացիան, բացի հիմնական խնդիրներից, կատարում է նաև նյութատեխնիկական միջոցների ապահովման և տարահանման խնդիրներ, ընդամենի թռիչքաուսունակները տեղաբաշխվում են սովորականից ավելի մեծ հեռավորությունների վրա՝ գետահովիտներում և ձորերում: Լրացուցիչ ուժերի ու միջոցների առկայության պայմաններում կարող է փոխադրել նաև դեսանտադիվերսիոն ուժեր: *Գրոհային ավիացիան*, բացի հիմնական խնդիրներից, կատարում է հակառակորդի կենդանի ուժի և կարևոր նշանակետերի խոցում լեռնաշղթաների հակադիր լանջերին, ձորակներում ու կիրճերում, լեռնանցքներում և նեղ անցուղիներում, պայթեցնում է կամուրջները, գետանցները, իսկ տեղանքի դժվարամատչելի հատվածներում, տարաշարժի և վերախմբավորման ուղիներում ստեղծում է փլվածքներ ու փլուզումներ:

Լրակցված *օդադեսանտային ուժերը* կիրառվում են որպես պահուց զորք և կարող են կատարել հակադեսանտային պայքարի, կարևոր լեռնանցքների, ճանապարհային հանգույցների, կցվածքների պահպանության, հակառակորդի շրջանցող ջոկատներից «մեռյալ» հատվածների ու դասավորման տարրերի բաց զորաթևերի պաշտպանության խնդիրներ:

2) *Ջորքերին (օպերատիվ դասավորման տարրերին) տրվող առաջադրանքները սահմանելիս* նպատակահարմար է, որ պաշտպանությանը զորամիավորումների և զորամասերի անցման խնդիրները սահմանվեն սովորականից ավելի լայն ճակատով և խորությամբ: Թեև մարտական խնդիրների բովանդակությունը մնում է նույնը, սակայն դրանցում հրամանատարը պետք է հաշվի առնի լեռնային տեղանքի բնույթը, տարաշարժի ունակությունները, խնդիրները ինքնուրույնաբար լուծելու կարողությունները և ցուցումներ տա արգելքների ու խոչընդոտների շրջանցման կամ գետանցման վերաբերյալ:

3) *Փոխզործության հիմունքները սահմանելիս*, բացի սովորական հարցերից, որոշվում և համաձայնեցվում են, թե՛

- ուվքեր և ինչ ուժերով ու միջոցներով են խոցելու հակառակորդին ուղիղ նշանառության տակ չգտնվող տեղանքում, բարձունքներում, լեռնանցքներում և հովիտներում, բաց գորաթևներում,
- ինչպես է թևահար, խաչածև և դաշունային կրակը վարվելու նախապատրաստված կրակային դարաններից, «կրակային պարկերում», հենակետերի ընդմիջակայքում, ինչպես նաև ծածկապաշտպանիչ կրակը՝ անտառներից, ձորակներից և լեռնանցքներից դուրս գալու ժամանակ:

4) *Կառավարման հիմունքները սահմանելիս* հաշվի է առնվում հետևյալը.

- կառավարման կետերն ստեղծվում են ինչպես սովորական պայմաններում, սակայն տեղակայվում են զորքերին հնարավորինս մոտ՝ լեռնաշղթաների հակադիր մասերում, «մեռյալ» հատվածներում: Ջորքերի ու կառավարման կետերի պաշտպանության համար օգտագործվում են բնական քարայրներն ու քարանձավները, թունելներն ու հանքախորշերը,
- ալեհավաքաֆիդերային սարքավորանքը լրացուցիչ կերպով ամրակապվում է, կիրառվում են շանթապաշտպան համակարգեր: Էլեկտրական և օպտիկական կապի մալուխները տարվում են սպասարկման ու նորոգման համար մատչելի ուղեգծերով,
- կապի հանգույցների տարրերը տեղաբաշխվում են ապակենտրոնացված՝ ըստ տեղանքի ռելիեֆի, ընդամին լայնորեն կիրառվում են արբանյակային, կարճալիք ռադիոկապի միջոցներ, ռելիեֆի հաշվառմամբ ԳԿԱ-ռադիոկապի համար կիրառվում են վերահաղորդիչներ, մեծացվում է ռադիոէլեկտրոնային միջոցների սպասարկման հաճախականությունը,
- քանի որ լեռներում կառավարումը բարդ է, ապա «վերևից ներքև» բոլոր հիմնական կարգադրությունների և «ներքևից վերև» մարտական հաշվետվությունների հաղորդման գործում կարելի է ըստ անհրաժեշտության ընդգրկել կապի (հաղորդակցման) սպաների:

5) *Համակողմանի ապահովումների հիմունքներում* կատարվում են լեռնային գործոններով պայմանավորված հետևյալ ճշգրտումները.

- *հետախուզության կազմակերպման ոլորտում՝*
 - դիտարկման համակարգը կառուցվում է բազմահարկ, բարձրադիր բարձունքներում, ընդամին հետախուզական դիտակետերի թիվն ավելացվում է,
 - լայնորեն կիրառվում են հետախուզական ԱԹԱ-ներ, ուղղաթիռներ, հետախուզական ազդանշանային սարքավորանք և դարաններ,
- *ինժեներական ապահովման ասպարեզում՝*
 - ամրաշինական աշխատանքների կատարման համար զորամիավորումները և զորամասերը ապահովվում են հորատման ու պայթեցման լրացուցիչ միջոցներով,
 - գետանցման համար նախատեսվում են համապատասխան կառուցատարրեր և տեխնիկա,

- տարաշարժի երթուղիների անցանելիությունը պահպանվում է շարժումն ապահովող ջոկատի (ՇԱՋ) կիրառմամբ,
- տարածքն ականապատվում է հեռահար ականապատման միջոցներով և ականադիրներով,
- համապատասխան ինժեներական տեխնիկա է հատկացվում ճանապարհային ցանցի անցանելիության ապահովման ու պահպանման համար,
- *ՌԷՊ-ի կազմակերպման ոլորտում`*
 - ապահովվում է առանձնակի կարևորության օբյեկտների (թունելներ, լեռնային գետանցումներ, ճանապարհային հանգույցներ և այլն) ռադիոէլեկտրոնային ծածկապաշտպանություն,
 - ՌԷՊ-ի ուժերի և միջոցների կիրառման արդյունավետության մեծացման նպատակով այդ միջոցները տեղակայվում են թռչող ապարատներում, լեռների լանջերին և բարձունքների վրա,
- *ՌՔԿՊ ապահովման ոլորտում`*
 - ապահովվում է զորքերի տարաշարժի ծածուկության և հակառակորդի կրակային խոցման միջոցներից գլխավոր խմբավորումների ու կարևոր օբյեկտների ծածկապաշտպանությունը անրոզոլների (ծխածածկույթների) կիրառմամբ,
 - լեռնանցքների, կիրճերի, ճանապարհային հանգույցների գրավման, ապա և պահման ժամանակ կիրառվում են հրկիզող զենքեր (հրանետներ),
- *օպերատիվ քողարկման ասպարեզում`*
 - միջոցառումները պլանավորվում և իրագործվում են ինչպես սովորական պայմաններում,
 - հատուկ ուշադրություն է դարձվում ձայնային քողարկման հարցերի վրա, քանի որ լեռներում ձայնը տարածվում (արծագանքվում) է ավելի մեծ հեռավորություններով,
- *թիկունքային ապահովման ոլորտում`*
 - նյութատեխնիկական ապահովման գործառններն ու ստորաբաժանումները տեղակայվում են մի քանի շրջաններում` զորքերին հնարավորինս մոտ,
 - առանձին (մեկուսի) ուղղություններում գործող զորքերի խմբավորումների համար ստեղծվում են նյութատեխնիկական միջոցների լրացուցիչ պաշարներ,
 - առբերման և տարահանման ուղիները լրասարքավորվում են լրացուցիչ ցուցանակներով, կարգավորման կետերի թիվն ավելացվում է,
 - նախօրոք ստեղծվում են զինամթերքի, վառելիքի և այլ նյութական միջոցների պաշարներ,
 - զորքերն ապահովվում են հատուկ և տաք լեռնային զգեստներով և այլ հանդերձանքով` պարաններով, ճանկիչներով, լեռնարշավային ճոպաններով, չոր օրապահիկներով, պարենամթերքով և այլն,
 - էլեկտրական սնուցմամբ աշխատող միջոցների համար հատկացվում են լրացուցիչ մարտկոցներ և լիցքավորիչներ,

- հատուկ ուշադրություն է դարձվում անձնակազմի տաքացման և ջրամատակարարման հարցերին, այդ թվում՝ անձնակազմին տաքացնելու և տաք կերակուր պատրաստելու համար հատկացվում են սպիրտայրոցներ, չոր սպիրտ, նավթավառներ և փայտածուխ:

Թիկունքային ապահովումների գծով կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունը հնարավորություն են տալիս մշակելու լեռնային պայմանների բացասական ազդեցությունը նվազեցնելու և դրանց հարմարեցումն արագացնելու համար *որոշ առաջարկություններ*: Եթե սովորական պայմաններում օրգանիզմի բնականոն աշխատանքի համար զինծառայողին պետք է լինում օրական 3000–4000 կկալ, ապա լեռներում այդ թիվը հասնում է 5000–6000-ի:

Դրա համար խորհուրդ է տրվում օգտագործել հնարավորինս շատ հեղուկներ, բացառությամբ ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև սուրճի, մուգ թեյի և օրգանիզմի տոնուսը բարձրացնող այլ հեղուկների: Ծխելը համարվում է անցանկալի¹⁰:

Որպեսզի անձնակազմը արագորեն հարմարվի բարձրլեռնային պայմաններին, խորհուրդ է տրվում նաև օգտագործել վիտամիններ, ամինաթթուներ, միզամուղ դեղամիջոցներ, ծայրամասային անոթալայնիչներ, որոնք մեծացնում են լեռներում գտնվող անձնակազմի աշխատունակությունը, արագացնում ուժերի վերականգնումը:

Այս ամենը կարևորելով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը վերանայել է ծովի մակերևութից 2000 մետր և ավելի բարձր տեղաբաշխված զորամասերի և խնդիրներ կատարող զինծառայողների սննդի օրական չափաքանակները և տեսականին¹¹,

• *տեխնիկական ապահովման ասպարեզում՝*

- սպառազինությունը և ռազմական տեխնիկան (ՍՈՏ) համարվում են մեծ անցունակությամբ միջոցներով,
- զառիթափների և զառիվերների համար հատկացվում են հերթապահ քարշակներ,
- վարորդական անձնակազմի հետ անցկացվում են հատուկ պայմաններում լրացուցիչ պարապմունքներ, հատկապես՝ գիշերային և ձմեռային ամիսներին տեխնիկան շահագործելու գծով,
- ՍՈՏ-ն նախապատրաստվում է հատուկ պայմաններում շահագործման, ինչի համար նպատակահարմար է լրացուցիչ կերպով հատկացնել անվադողերի շղթաներ, ապաստառցապատիչ և ապակեմաքրիչ հեղուկներ, քերիչներ, քարշակման ձողեր կամ ժապավեններ, լեռնային արգելակներ և այլն,
- ենթակա ստորաբաժանումներին հարկավոր է ավելի հաճախ տրամադրել օդերևութաբանական տվյալներ՝ յուրաքանչյուր ժամը մեկ,

¹⁰ Տես Ս. Ա. Պարզյան, Ա. Ռ. Համբարձումյան, Լ. Գ. Հովհաննիսյան, Նշ. աշխ.:

¹¹ Տես նույն տեղում:

- *բժշկական ապահովման ոլորտում*
 - կյանքին սպառնացող վտանգներից խուսափելու համար սիրտ-անոթային կամ թոքերի հիվանդություններով տառապող անձանց 2000 մետրից ավելի բարձրություններում կատարվելիք խնդիրներում ներգրավելուց առաջ պարտադիր կերպով պետք է խորհրդակցել բժշկի հետ,
 - առանձնակի ուշադրություն պետք է դարձնել անձնակազմի ցրտահարության, մարմնի ջերմաստիճանի նվազման, համապատասխան հանդերձավորում չունեցող և պատրաստում չանցած անձնակազմի արևային այրվածքների և ձյան կուրության ստացման, ինչպես նաև ինքնօգնության ու փոխօգնության հարցերին,
- *բարոյահոգեբանական ապահովման ոլորտում*
 - քանի որ դաժան լեռնային պայմանները ազդում են մարդկանց ոչ միայն ֆիզիկականի, այլև մեծապես հոգեկանի վրա, նպատակահարմար է անձնակազմի հետ անցկացնել գործնական պարապմունքներ հատուկ հոգեբանական պատրաստման, հոգեբանական ինքնօգնության ու փոխօգնության հարցերով,
 - անձնակազմի հետ կազմակերպել նպատակային տեղեկատվաքարոզչական աշխատանքներ՝ առաջադրված մարտական խնդիրները ցանկացած իրավիճակում կատարելու անհրաժեշտության հարցերով,
 - անձնակազմը համալրել գերազանցապես հատուկ պատրաստում անցած (ունեցող) անձնակազմով և լեռնային շրջաններում ապրող մարդկանցով, քանի որ վերջիններիս օրգանիզմն ընդհանուր առմամբ հարմարված է լեռնային պայմաններում ապրելուն և գործելուն:

Ամփոփում

Լեռնային պայմաններում օպերացիայի կազմակերպումը և վարումը զգալիորեն տարբերվում են սովորականից*։ Բարձրադիր գոտում օպերացիաներ վարելիս հրամանատարությունը և զորքերը գործում են արտակարգ իրավիճակում (ծայրագույն պայմաններում), երբ զինծառայողների, ՍՈՏ ու սարքավորանքի ծանրաբեռնվածությունն զգալիորեն աճել է, իսկ գործողությունների կատարման այն կարգը, եղանակներն ու ձևերը, որոնք արդյունավետ են սովորական պայմաններում, լեռնային պայմաններում դարձել են դժվար իրագործելի:

Ջորքերի խմբավորումներն ստիպված են լինում գործել ինքնուրույնաբար, որպես կանոն, տարանջատված ուղղություններով, կիրառել գործողությունների հատուկ ձևեր ու մեթոդներ, օպերացիայի ընթացքում լուծել մի շարք ոչ ավանդական խնդիրներ:

Լեռնային պայմաններում զորքերի (ուժերի) ապահովումը դառնում է հաջողության հասնելու որոշիչ գործոն, նշանակալիորեն մեծանում է թե՛

* Քանի որ մեծ պետությունները հիմնականում գտնվում են ցածրադիր գոտիներում, ապա տեսական ու գործնական մշակումների գերակշռող մեծամասնությունը վերաբերում է հենց այդ աշխարհագրական գոտում ռազմական գործողությունների վարմանը:

գորատեսակների, ծառայությունների և հատուկ զորքերի միջև փոխգործության, թե՛ գործողությունների հանկարծակիության դերը:

Լեռնային պայմաններում օպերացիաների նախապատրաստման ու վարման առանձնահատկությունների հետևանքով հրամանատարությունից պահանջվում են ստեղծագործականություն, առաջադրված խնդրի լուծման արդյունավետ ուղիների ու միջոցների անխոնջ փնտրտուք՝ հիմնված զորքերի գործողությունների վրա Լեռնային պայմանների ազդեցության համակողմանի հաշվառմամբ, և նախապատրաստման ու վարման փորձի ու տեսության իմացություն: Ըստ էության՝ Լեռնային պատերազմը պահանջում է յուրահատուկ մտածելակերպ, ինչպես նաև ինքնատիպ հմտություններ:

Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

- ❖ հրամանատարաշտաբային զորավարությունների, շտաբային մարզումների ժամանակ սերտել Լեռնային գործոնների ազդեցությունը հաշվի առնելու մեթոդները, ինչը կնպաստի օպերացիայի որոշման ընդունման ժամանակ հակառակորդին առավելություն ընձեռող ռիսկերի նվազեցմանը, յուրային զորքերի և միջոցների արդյունավետ կիրառման լիակատար ապահովմանը,
- ❖ Լեռնային պայմաններում կատարվելիք մարտական խնդիրներում (մարտական հերթապահությունում) ներգրավվող զորամիավորումները (զորամասերը) վաղօրոք պատրաստել բացասական գործոնների և դրանց ազդեցության նվազեցմանը նպատակաուղղված միջոցառումների ու միջոցների գրագետ կիրառմանը,
- ❖ մշակել մեթոդական ձեռնարկ՝ Լեռնային պայմաններում զորքերի լիարժեք պատրաստման համար,
- ❖ կենտրոնացված կարգով պատրաստել «Լեռնային» հրահանգիչների այն զորամիավորումների և զորամասերի համար, որոնք պետք է մարտական գործողություններ վարեն Լեռնային պայմաններում:

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМАНДИРА В ГОРНЫХ УСЛОВИЯХ

*В. Г. ШАРЯН, полковник запаса, ученый-аналитик Центра исследований
оперативного искусства НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Командиры часто утверждают, что они воюют в горах не только с противником, но и против окружающей среды, и если войска могут сражаться в горах, то могут вести бой в любых условиях. Организация и проведение операции в горных условиях значительно отличаются от обычного. При ведении операций в возвышенной зоне командование и войска действуют в чрезвычайной ситуации (в крайних условиях), когда нагрузка на военнослужащих, ВВТ и оборудование существенно

возрастает, а эффективные в обычных условиях порядок, способы и формы действий становятся трудновыполнимыми.

В горах группировки войск вынуждены действовать самостоятельно, как правило, на разобценных направлениях, применять особые виды и методы действий, в ходе операции решать ряд нетрадиционных задач.

Вследствие особенностей подготовки и проведения операций в горных условиях от командования требуются творческий подход, неустанный поиск эффективных путей и средств решения поставленной задачи, основанный на максимальном учете воздействия горных условий на действия войск, знание теории и опыта подготовки и ведения операций в горах. По сути, горная война требует своеобразного склада ума, а также особых навыков.

FEATURES OF THE COMMANDER'S COMMAND ACTIVITIES IN MOUNTAINOUS ENVIRONMENT

*V. H. SHARYAN, Colonel (Res.), Research Fellow, Center for Research
on Operational Art, NDRU, MOD, RA*

SUMMARY

Commanders often claim that in the mountains they fight not only against the enemy, but also against the environment, and if troops can fight in mountainous environments, then they can fight in any conditions. The organization and conduct of an operation in mountainous environments significantly differ from those of the ordinary. When conducting operations in an elevation zone, the command and the troops act in an emergency situation (in extreme conditions), when the load on the servicemen, armaments and military equipment, as well as the installations heavily increases, and the order, methods and forms of actions that are effective in normal conditions become difficult to implement.

As a rule, in the mountains, groups of troops have to act independently on separate axes, use special modes and methods of action, and solve a number of non-standard tasks during the operation.

Due to the specifics of preparing and conducting operations in mountainous environments, the command has to demonstrate a creative approach, somewhat an incessant search for effective ways and means of solving the assigned task, based on the utmost consideration of the impact of mountainous conditions on the actions of troops, knowledge of the theory and experience of preparing and conducting operations in the mountains. In essence, mountain warfare requires a unique mindset, as well as specific skills.